ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 հունվարի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

4
(2670)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 4

Հայաստանի առաջին արբանյակը Երկիր մոլորակի ուղեծիր դուրս բերվեց 2022-ի մայիսի 25-ին: Ծուտով պարզ դարձավ, որ արբանյակի շահագործման համար անհրաժեշտ է Հայաստանում արբանյակի կառավարման կենտրոն ստեղծել. այդ մասին հայտնեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը արբանյակի արձակման հաջորդ օրը եւ կենտրոնի կառուցման վերջնաժամկետ նշեց 2023թ.-ի վերջը: Այնուհետեւ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության փոխնախարար Ավետ Պողոսյանը հոկտեմբերի 25-ի Ազգային ժողովի նիստում, պատասխանելով պատգամավորի՝ կառավարման կենտրոնի ստեղծման մասին հարցին, վստահեցրեց, որ այն պատրաստ կլինի մինչեւ 2022-ի տարեվերջ: Մեկ ամիս անց՝ նոյեմբերի 18-ին, արդեն ԲՏԱ նախարար Ռոբերտ Խաչատրյանը հայտնեց, որ արբանյակի թեստավորումներն ավարտվել են, այն պատրաստ է շահագործման, իսկ կառավարման կենտրոնը շուտով կբացվի: Մինչեւ տարեվերջ նման կենտրոն այդպես էլ չբացվեց: Վերջերս «Սիվիլնեթ»-ը հարցում էր ուղարկել ԲՏԱ նախարարություն եւ հստակ ժամկետներ խնդրել: ԲՏԱ նախարարությունից պարզաբանել են, որ բացման կոնկրետ ժամկետ հայտնի չէ, եւ կենտրոնը նախատեսվում է գործարկել 2023թ.-ի ընթացքում: Նախարարությունից նաեւ հստակեցրել են, որ Հայաստանում ընդունիչ կայանը դեռեւս չի ստեղծվել: Նկատենք, որ արբանյակի գործարկման օրվանից տարատեսակ ոչ միանշանակ կարծիքներ ու պնդումներ են հնչում արբանյակի պատկանելության, հնարավորությունների եւ նպատակահարմարության մասին, եւ, ամենակարեւորը, ինչպես նշել էր ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը, Ադրբեջանի սեպտեմբերյան ագրեսիայի որեւէ նկարահանում չի արվել կամ չի հրապարակվել ամենազոր արբանյակի կողմից: Եթե պատերազմի հանցանքներն էլ մենք չենք կարողանում ապացուցել արբանյակից արված կադրերով, ի՞նչ իմաստ ունի ընդհանրապես դրա գոյությունը:



Ազգային ժողովի խորհուրդն այսօր նիստ է հրավիրելու, որի ընթացքում էլ անհարգելի բացակաների թիվը գերազանցած պատգամավորների մասով որոշում կկայացվի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ թիրախում ՀՅԴ ԳՄ անդամ Իշխան Սաղաթելյանն է: Թեեւ բացակաների թիվը գերազանցած պատգամավորները 22-ն են, բոլորն էլ՝ «Հայաստան» խմբակցությունից, բայց տեղեկացանք, որ Սաղաթելյանի բացակայություններն ավելի շատ են, եւ իշխանությունը մտադիր է ՍԴ դիմել միայն Իշխան Սաղաթելյանի մասով՝ միջնորդելով զրկել նրան մանդատից: Այս առիթով մեկնաբանություն խնդրեցինք ԱԺ նախագահի մամուլի խոսնակ Ծովինար Խաչատրյանից, որն ասաց. «Այդ մասով ոչինչ չեմ կարող ասել, վաղը խորհրդի նիստն է որոշելու»: Նկատենք, որ «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Իշխան Սաղաթելյանը եւ Սեյրան Օհանյանը արդեն տեւական ժամանակ է՝ իշխանությունների ուշադրության կենտրոնում են, ամեն կերպ փորձում են դաշտից հեռացնել ընդդիմադիր երկու պատգամավորներին: Ընդդիմադիրները, նշենք, վաղվա խորհրդի նիստին չեն մասնակցի:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարարությունը հերթական անգամ անհարմար իրավիճակում է հայտնվել: Դեկտեմբերի 16-ին Գեղարվեստի պետական ակադեմիայում ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանի նախագահությամբ տեղի ունեցած հոգաբարձուների խորհրդի նիստում ռեկտորի պաշտոնում է վերընտրվել Արամ Իսաբեկյանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Իսաբեկյանը միաձայն է ընտրվել, նրա թեկնածությանը հոգաբարձուների խորհրդի որեւէ անդամ չի առարկել, ինչը, սակայն, խիստ մտահոգիչ ու տարօրինակ է, քանի որ, ըստ պահանջի, Իսաբեկյանն այդ պաշտոնում առաջադրվել, էլ ուր մնաց ընտրվել չէր կարող, եւ, հետեւաբար, հանձնաժողովականների, այդ թվում՝ փոխնախարար Խզմալյանի մոտ հարցեր չառաջանալն առնվազն տաօրինակ է: Բանն այն է, որ 2021 հուլիսի 29-ի ՀՀ կառավարության 1248-Ն որոշման համաձայն՝ «ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել ՀՀ այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի գիտական աստիճան եւ առնվազն 5 տարվա ակադեմիական եւ գիտական գործունեության ստաժ»: Թեեւ անվանի նկարիչ Իսաբեկյանը տարիների փորձ, վաստակ ու գիտական կոչում ունի, բայց պահանջվող գիտական աստիճան (գիտությունների թեկնածու կամ դոկտոր) չունի, հետեւաբար ռեկտոր ընտրվել չէր կարող: Ի՞նչ է ստացվում. ԿԳՄՍ բարձրաստիճան պաշտոնյայի հովանու ներքո կրթական հաստատությունում ապօրինի, պաշտոնեական կեղծիքով ընտրություն է տեղի ունեցել: Հարցի մասով ԿԳՄՍ փոխնախարար Խզմալյանի տեսակետը լսել չհաջողվեց. նա մեր զանգերին չարձագանքեց, նախարարության լրատվական ծառայությունից էլ փոխանցեցին, որ հարցին միայն գրավոր հարցման դեպքում կպատասխանեն: Սա, թերեւս, նախարարության «թափանցիկ» աշխատելաոճի մասին է վկայում: Ի դեպ, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ կառավարության երեկվա նիստի օրակարգում նախապես ներառված է եղել Գեղարվեստի ակադեմիայի ռեկտորի ընտրության արդյունքները հաստատելու հարցը (16-րդ հարցն է եղել), բայց կարճ ժամանակ անց հանվել է օրակարգից: Հուսանք՝ ապօրինությունը չի հաստատվի:



Ուշագրավ տեղափոխություն եւ նշանակում՝ Գլխավոր դատախազությունում: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արթուր Պողոսյանը ԱԱԾ-ից իր հավատարիմ գործընկերներին տեղափոխում է Գլխավոր դատախազություն: Նկատենք, որ վերջերս ԱԱԾ-ից դատախազություն տեղափոխված պաշտոնյան պատահական մարդ չէ: Այսպիսով, ՀՔԾ-ում (ներկայումս վերափոխված Հակակոռուպցիոն կոմիտեում) «Մարտի 1»-ի քրեական գործով, «Սասնա Ծռերի» դեպքերով լրագրողներին հարցաքննած եւ քաղաքական իշխանության հրահանգով «Մարտի 1»-ի գործով «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողի հեռախոսային խոսակցությունները ապօրինի կերպով գաղտնալսած քննիչ Վազգեն Ավետիսյանն է տեղափոխվել, որը հեղափոխությունից հետո տեղափոխվել էր ԱԱԾ եւ նշանակվել ԱԱԾ քննչական դեպարտամենտի պետի տեղակալ: Ասել է թե՝ քաղաքական հրահանգներով առաջնորդվող պաշտոնյան հիմա էլ ԱԱԾ-ից դուրս կգործի՝ օգտվելով դատախազի վերահսկողական գործառույթներից: Նա կլինի ՀՀ գլխավոր դատախազության՝ պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ:

ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՎԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցն է քաղաքագետ Թեւան Պողոսյանը:

-Պարոն Պողոսյան, Արցախը մեկ ամիս է՝ ամբողջ աշխարհի ու Հայաստանի հետ կապվելու եղանակ չունի, որովհետեւ փակ է հաղորդակցային միակ միջոցը՝ Լաչինի միջանցքը: Գնահատականներ հնչել են ամենատարբեր մակարդակով, ընդհուպ ՄԱԿ-ի ամբիոնից է խոսվել այդ մասին, բայց գնահատականներից եւ կոչերից այն կողմ գործողություն չենք տեսնում: Ի՞նչ անել այս իրավիճակում:

-Երբ որ ասում են, թե գործողություններ չկան, պետք է հասկանանք, թե ումից ենք ինչ ակնկալել: Ունենք շատ հետաքրքիր իրավիճակներ, եւ ինչ-որ բաներ ենք նախաձեռնում ու գիտենք, որ այդ ինստիտուտները, բացի ասելուց, ոչինչ չեն անում: Երբ այս վիճակն ենք ունենում, ապա ինքներս պետք է հասկանանք, թե ինչ պետք է անենք, որ կոնկրետ լիներ: Եթե պետք է լիներ ՄԱԿ-ի բանաձեւ, պետք է հասկանալ, որ ինչ-որ մեկը պետք է լիներ, որ դա կյանքի կոչեր: Աշխարհում ով է այդ մեկը՝ ման ենք գալիս: Մենք պետք է հասկանանք, թե ինչ պետք է նախաձեռնենք: Ֆրանսիան այնպես չէ, որ ինքն իրենով նստել ու որոշել է բանաձեւ հեղինակել: Եղել է հայկական կողմից խնդրանք, բայց այդ խնդրանքի ժամանակ մոռացել ենք շատ կարեւոր մի բան ասել, որ պետք է արդյունք ունենանք: Ինչ-որ երկիր երբ բան է անում, իր շահերից ելնելով է նաեւ անում: Ամեն օր մի նոր բան է բացահայտվում:

-Հայկական կողմը չի՞ կարողանում արդյունքի հասնել:

-Կան տարբեր պատճառներ, օրինակ՝ որ չես կարողանում կամ չես ցանկանում, ամեն ինչ փնթի ես անում, որ ոչ մի արդյունք չտա: Կա իշխանություն, որ ինչ որ բան չի ցանկանում, բայց ձեւական քայլեր է անում: Արցախի պետնախարարի հայտարարությունը, որ կան տարաձայնություններ Արցախի հետ, հետաքրքիր է, եւ նշում են, թե կաշխատեն այն իշխանությունների հետ, որոնք այլ կարծիք ունեն: Մյուս տարբերակն այն է, որ ուզում ես, բայց ինչ-որ բան չի ստացվում:

-Ռուբեն Վարդանյանի հայտարարությունները, լայվեր մտնելը, կարծես թե, Նիկոլ Փաշինյանի պահվածքն է կրկնում:

-Նայեք, ինտերնետի դարաշրջան է, եւ նաեւ բնական է, որ մարդիկ սոցիալական ցանցերով են տեղեկություն ստանում: Դա տեղեկություն եւ իրազեկում է. ճիշտ մոտեցում եմ համարում, որ հանրության հետ պետք է խոսել եւ իրազեկել: Համաձայն եմ մի հանգամանքի հետ, որ եթե բերելու եք օրինակ, ապա անուն ասեք: Մեր հասարակությունում կան տարբեր խնդիրներ, եւ արժեքների մեջ մեկը, երբ ռեսուրսներ ունի, փորձում է իրեն այլ կերպ պահել: Արցախում դրական փոփոխություններ եւս կան, եւ կողմ եմ, որ բացասական բաների մասին բարձրաձայնվում է, սակայն պետք է անուններ նշվեն եւ ձեռքերից բռնեն: Ես կարծում եմ, որ Լաչինի միջանցքը հնարավոր կլինի բացել այլ ճանապարհով, ոչ թե բանակցություններով: Կարող եք այնպիսի գործողություններ անել, որ դա Ադրբեջանին կորուստներ կպատճառի: Երբ ճանապարհը փակվի, ապա պետք է մի բան մտածել, որ չկրկնվի այժմյան երեւույթները լրատվական դաշտում: Հայաստանում մի անգամ է իշխանափոխություն եղել, այն էլ՝ ճանապարհ փակելով, եւ նաեւ դա է պատճառը, որ այժմ ընդդիմությունը եւս փորձում է ճանապարհ փակելով իշխանափոխություն անել: Երբ մենք տեսնում ենք, որ պարտված իշխանությունը մնացել է իշխանության, մենք զարմանում ենք: Եթե իշխանությունը քայլեր է անում եւ ձախողում է, պետք է գիտակցված հեռանա: Այդքանից հետո նա շարունակում է մնալ իշխանության, խոսել նաեւ Արցախը կորցնելու մասին: Եթե Արցախը կորցնենք, Հայաստանն էլ ենք կորցնելու: Շեշտադրումը դնել մեկը մյուսով ամենասխալ բանն է: Պետք է երկուսն էլ հասկանալ, որ Հայաստան պահելու համար պետք է պահել Արցախը եւ հակառակը:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԱՍՈՒԼԻՍ

ՓԱՇԻՆՅԱՆՆ ՈՒՆԱԿ ՉԷ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ԲԱՆԱԿԸ

Նիկոլ Փաշինյանն իր վերջին ասուլիսի ժամանակ հայտարարեց, թե 44-օրյա պատերազմից առաջ ինքը գիտեր, որ մենք ունենք մարտունակ բանակ, սակայն պատերազմից հետո պարզեց, որ այդպես չէ:

Այս առիթով ArmLur.am-ը զրուցել է ՀՈՒ ԳՇ նախկին ղեկավար Մովսես Հակոբյանի հետ:

-Պարոն Հակոբյան, որպես զինվորական՝ ինչպե՞ս կգնահատեք Փաշինյանի այս հայտարարությունը, արդյոք սա բանակը թիրախավորող հերթական հայտարարությունը չէ՞ր:

-Ո՞վ է գնահատական տվողը. Նիկոլ Փաշինյանն այն մարդը չէ, որ բանակի մարտունակությունը գնահատելու ունակություն ունենա. դա՝ առաջին: Երկրորդ՝ իր երեկվա խոսքը չես կարող այսօրվա խոսքի հետ համեմատել, անընդհատ խուսանավող հայտարարություններ է անում: Ինքն այդ մարդը չէ, որ գնահատական տա բանակին, մնացած բոլոր գնահատական տվողներն էլ իր կարգի մարդիկ են, որոնք բանակից հեռու են այնքան, որքան ես՝ գինեկոլոգիայից:



-Պարոն Հակոբյան, 2020թ.-ի հուլիսյան մարտերից հետո Փաշինյանը հայտարարում էր, որ մեր բանակը տարածաշրջանում ամենամարտունակներից է, պարծենում էր մեր բանակով. ի՞նչ փոխվեց 2 տարի անց:

-Ինքն այդ ժամանակ ասում էր՝ ամենից մարտունակ բանակն ունենք, այդ ժամանակ էլ ես իրենց նախատել եմ, որ այդպիսի արտահայտություններ չանեն:

-Արցախում ստեղծված իրավիճակի մասով ի՞նչ կասեք, պարոն Հակոբյան: Արդեն մեկ ամիս կլինի՝ Արցախի կյանքի ճանապարհը փակ է, մեր հայրենակիցները շրջափակման մեջ են այնտեղ: Ինչպե՞ս եք տեսնում այս ճգնաժամի հանգուցալուծումը, ի վերջո, ո՞ւմ ձեռքում է լուծման բանալին.

-Պատասխանատուները Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներն են: Նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագիրն այդ երեք երկրներն են ստորագրել, իրենք պատասխանատվություն են կրում նաեւ իրենց ստորագրած փաստաթղթի համար. այս ուղղությամբ պետք է աշխատանք տարվի: Ինչ վերաբերում է Լաչինի միջանցքը բացել-փակելուն, նոյեմբերի 9-ի փաստաթուղթը մեզ համար շատ վատ փաստաթուղթ է. դա հնարավորություն է ստեղծում Ադրբեջանի համար, որ երբ ուզի, ճանապարհը բացի կամ փակի:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՔՅԱՐԱՄՅԱՆԻ ՁԵՌՔՈՒՄ

ՀՀ քննչական կոմիտեն 2023 թվականին դառնալու է հանրապետության ամենաշատ գործեր քննող նախաքննական մարմինը: Բանն այն է, որ 2023 թվականի տարեսկզբից ՀՀ բոլոր օլիգարխները հայտնվելու են ՀՀ քննչական կոմիտեի տեսադաշտում: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ 2023թ. հունվարի 1-ից տնտեսական հանցագործություններով նախաքննության գործառույթը ՀՀ պետեկամուտների կոմիտեից փոխանցվում է ՀՀ քննչական կոմիտեին, եւ ՀՀ ՊԵԿ-ն այլեւս չի հանդիսանալու նախաքննություն իրականացնող մարմին: Համապատասխան իրավական ակտերի հիման վրա կատարված սույն փոփոխության արդյունքում ՀՀ ՊԵԿ քննչական մարմնի 55 հաստիքները 2023թ. հունվարի 1-ից փոխանցվում են ՀՀ ՔԿ-ին: Վերոնշյալ փոփոխությունը բխում է ՀՀ կառավարության՝ դեռեւս 2019թ. որոշումներով հաստատված՝ դատահրավական բարեփոխումների եւ հակակոռուպցիոն ռազմավարություններից եւ դրանց իրականացման միջոցառումների ծրագրերից: Այն պայմանավորված է նույնաբնույթ հանցագործությունների վերաբերյալ տարբեր նախաքննական մարմինների կողմից քննություն իրականացնելու պրակտիկայից հրաժարվելու, գործառույթների կրկնությունը բացառելու անհրաժեշտությունից: Նկատենք, որ ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահ Աղվան Հովսեփյանն իր պաշտոնավարման տարիներին ամեն ինչ անում էր, որ ՊԵԿ քննչական վարչությունը անջատվեր ՊԵԿ-ից եւ միանար կոմիտեին, սակայն ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանը հաղթեց եւ օլիգարխներին իր մահակի տակ պահելու համար չտվեց նախաքննության իրավունքը ուրիշի: Այսպիսով, ՀՀ ՊԵԿ քննչականը եւս Արգիշտի Քյարամյանի ձեռքում է:

ԵՐԵԽԱՅԻ ՀԱՄԱՐ

Հունվարի 8-ին Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանն ուղիղ եթերում մի հայտարարություն արեց, որը մեծ աղմուկ բարձրացրեց: «Մենք գիտենք, որ ունեւոր մի ընտանիք գնացել է հանգստանալու՝ օգտագործելով իրենց կապերը, եւ դա շատ մեծ արձագանք է ստացել: Հարցերից մեկն այն է, որ ոչ թե դա սխալ է, որ իրենք արել են, այլ որ դա չպետք է ընդունվի, որ դա է հաջողված ընտանիքի, հաջողակ մարդու մոդելը. տեսեք՝ ինքը կարողացավ», - նշել էր նա: Սակայն, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, Ռուբեն Վարդանյանի կողմից նշված ունեւոր ընտանիքը ոչ թե մեկնել է հանգստանալու, այլ հիվանդ երեխային են բերել բուժման: Ընդ որում՝ Ռուբեն Վարդանյանը, այդ մասին իմանալով, արել է հայտարարություններ, որոնք նաեւ պառակտիչ բնույթի են եղել: Ինչո՞ւ. երեկ Ռուբեն Վարդանյանից հետաքրքրվեց «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողը, որին ի պատասխան՝ պետնախարարը խուսափեց ուղիղ պատասխան տալուց: «Ես երբ տեղափոխվել եմ Արցախ, զգացել եմ՝ մարդկանց մոտ կա անարդարության զգացում, մարդիկ զգում են, որ տարբեր պայմաններում են ապրում՝ լինելով նույն վտանգի առջեւ: Դա է մեր իրականությունը: Ամոթը պետք է գա մեր մեջ մտնի, ոչ թե օրենքով պատժել: Ես ասել եւ ասելու եմ այդպիսի դեպքերի մասին, չեմ ափսոսում խոսքերիս համար»,- հայտարարեց Արցախի պետնախարարը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Հունվարի 16-ին մեկնարկելու է Ազգային ժողովի այս տարվա առաջին նստաշրջանը: Այս շաբաթ արդեն իսկ տեղի են ունենում հանձնաժողովների նիստեր, իսկ օրակարգը հաստատվելու է վաղը՝ ԱԺ խորհրդի նիստի ժամանակ:

Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովում քննարկվելու է ««Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» նախագիծը: Դրանից բացի, մյուս հանձնաժողովում քննարկվելու է նաեւ ««Դեղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» եւ ««Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Կատարի Պետության կառավարության միջեւ առողջապահության բնագավառում համագործակցության վերաբերյալ» համաձայնագիրը վավերացնելու մասին» նախագծերը:

Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովում քննարկվելիք նախագծերը երկրորդ ընթերցմամբ են լինելու: Դրանց թվում են՝ ««Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին», ««Կրթության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» նախագծերը:

ԿԳՄՍ-ն էլ մի նախագիծ է ներկայացրել՝ ««Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» անվամբ, որտեղ ամրագրվելու է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձանները գտնվում են պետության պահպանության ներքո:

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցությունն էլ առաջարկում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարություն ընդունել Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքը պարբերաբար փակելու կապակցությամբ:

ՋԻՆՎՈՐԸ ԻՐԵՆ ՎՆԱՍԵԼ Է

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ընթանում է Եղիշե Սիմոնյանի դատավարությունը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ հանդիսանալով ՀՀ ՊՆ թիվ Ն զորամասի ժամկետային զինծառայող՝ 2022թ. հուլիսի 13-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում, զորամասի սանհանգույցում, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված, դիտավորությամբ վնաս է պատճառել իր առողջությանը՝ սուր կտրող առարկայով աջ բազկի շրջանում կատարել է կտրվածքներ, որի հետեւանքով ստացել է առողջության թեթեւ վնասի հատկանիշներ պարունակող մարմնական վնասվածքներ: Ե. Սիմոնյանին մեղադրանք առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 528 հոդվածի 1-ին մասով, նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել զինվորական հսկողությանը հանձնելը:

ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՕՐ

ԱՎԵԼԻ ՇԱՏ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՆՔ ՍՊԱՍՈՒՄ

Երեկ Երեւան-Արցախ տեսակամուրջի միջոցով ներկայացվեց Արցախում տիրող իրավիճակը: «31-րդ օրն է շրջափակման, դա նշանակում է՝ մենք ունենք խնդիրներ՝ պարենային ապրանքների հետ կապված, ինֆրաստրուկտուրայի բոլոր օղակներում, բժշկության մեջ, միմյանցից բաժանված ընտանիքներ ունենք, դեռեր կան, որ մարդիկ մահացել են, չեն կարողանում հողին հանձնել եւ այլն»,- Ստեփանակերտ-Երեւան տեսակամուրջի ժամանակ նշեց Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանը:

«Հարեւան պետությունը ասում է, որ խնդիրներ չկան. նրանք իսկապես չեն ուզում իրականությունը ընդունել: Իրենց հաշվարկներով՝ այս մի ամսվա մեջ անցել է մոտ 400 մեքենա, եւ եթե մենք նայենք մինչեւ բլոկադան, մեկ օրվա մեջ ավելի շատ մեքենա է անցել. սա խոսում է ճգնաժամի առկայության մասին: Ամեն տեղ խնդիրներ կան, բայց, միեւնույն ժամանակ, այս ամեն ինչը մեզ միավորեց, տեսանք, որ եւ՛ պետությունը, եւ՛ հասարակությունը միասին են դժվար ժամանակահատվածում»,- ասաց Ռուբեն Վարդանյանը:

Նրա խոսքով՝ դեկտեմբերի 25-ի հանրահավաքը ցույց տվեց, որ ժողովուրդը պատրաստ է կանգնելու պետության կողքին, եւ իրենց պայքարը ոչ թե պայքար է բլոկադայի դեմ, այլ պայքար է՝ հանուն սեփական հողում ապրելու իրավունքի: Ստեփանակերտ-Երեւան տեսակամուրջի ժամանակ Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանը պարզաբանեց, թե ինչ սպասելիքներ ուներ Հայաստանից, որոնք չեն իրականացել, երբ հայտարարել էր, թե Հայաստանը Արցախում տեղի ունեցողին չի արձագանքում այնպես, ինչպես ինքն էր սպասում:

«Մարդիկ, ովքեր ապրում են Հայաստանում, 100 տոկոսով չեն հասկանում, թե ինչ է նշանակում բլոկադա: Հայաստանում կան ՀԿ-ներ, որոնք կարող են դիմել միջազգային կազմակերպությունների՝ նշելով մարդու իրավունքների այն խախտումները, որոնք կատարվում են Հայաստանում: Մոտ 400.000 հոգի ունի արցախցու արմատներ, եւ ես հույս ունեի ու վստահ էի, որ իրենք անտարբեր չեն ու անհանգիստ են Արցախում տեղի ունեցածի վերաբերյալ, բայց նույն ցույցերը դեսպանատների մոտ ցույց տվեցին, որ մարդկանց մոտ հետաքրքրությունը քիչ է: Ինձ թվում էր, որ արձագանքը ԱԺ-ից եւ այլ պետական մարմիններից ավելի մեծ կլիներ»,- ասաց Վարդանյանը:

Հարցին՝ ինչ սպասելիքներ ունի ՀՀ իշխանություններից, պետնախարարն ասաց. «Հայաստանի իշխանությունը իր դիրքորոշումը արդեն հայտնել է. իրենք աջացում են ֆինանսապես եւ իրավական առումով, իրենք ասել են՝ այսքանը կարող ենք անել, ավելին չեն կարող անել: Այս իրավիճակում մենք ավելի շատ օգնություն ենք սպասում, բայց ամեն մեկը անում է այնքան, ինչքան կարող է. Հայաստանի իշխանություններն ասում են, որ այդքանը կարող են անել»:

«Ռուս խաղաղապահներն ունեն շատ սահմանափակ մանդատ, քիչ քանակով են այստեղ գտնվում, եւ մենք պետք է ամեն ինչ անենք, որ ռուս խաղաղապահների եւ՛ քանակն ավելացնենք, եւ՛ զինամթերքը, եւ՛ լուծենք երկարաժամկետության հարցը»,- Ստեփանակերտ-Երեւան «Արցախ. շրջափակման ամիս» խորագրով տեսակամուրջի ժամանակ հայտարարեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական նախարար Ռուբեն Վարդանյանը:

«Ամեն ինչ անելու ենք, որ ռուս խաղաղապահը այստեղ իրեն ավելի լավ զգա, ռուս խաղաղապահը պետք է զգա, որ ինքն այստեղ մեծ դեր է խաղում, զգա, որ ոչ թե իր դեմ ենք, այլ իրենց կողքն ենք կանգնած: Վե՛րջ տվեք ռուսներին թիրախավորել, ռուս խաղաղապահը չլիներ այստեղ, մենք էլ այստեղ չէինք լինի. ի՞նչ եք ուզում, որ քննադատե՞նք, չեմ անելու ես այդ բանը: Դրա համար ամեն ինչ անելու ենք, որ նրանք այստեղ երկարաժամկետ մնան, ուժեղանան, մենք էլ կանգնենք իրենց կողքին»,- եզրափակեց Ռուբեն Վարդանյանը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հունվարի 16-ին մեկնարկելու է Ազգային ժողովի այս տարվա առաջին նստաշրջանը: Այս շաբաթ արդեն իսկ տեղի են ունենում հանձնաժողովների նիստեր, իսկ օրակարգը հաստատվելու է վաղը՝ ԱԺ խորհրդի նիստի ժամանակ:

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցությունը վաղը՝ Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նիստի ժամանակ, ներկայացնելու է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարությունը Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքը պարբերաբար փակելու կապակցությամբ: Այն պետք է քննարկվի հանձնաժողովում, ապա՝ արդեն լիագումար նիստում:

Հայտարարության մեջ նշվում է, թե Ազգային ժողովը խստորեն դատապարտում է սույն թվականի դեկտեմբերի 3-ին եւ դեկտեմբերի 12-ին Ադրբեջանի կողմից բնապահպանական կեղծ պատրվակով Հայաստանն Արցախին իրար կապող Լաչինի միջանցքը փակելու սադրիչ քայլերը:

Նշվում է նաեւ, որ այս հայտարարության տեքստով նրանք կոչ են անում միջազգային հանրությանը դատապարտել Ադրբեջանի սադրիչ քայլերը ու ռազմատենչ վարքագիծը, տալ համարժեք գնահատականներ եւ ձեռնարկել ՄԱԿ-ի կանոնադրությունից բխող գործողություններ:

ԳՈՐԾԱՐԱՆԸ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

Սահմանամերձ Տավուշում գինու գործարան է վաճառվում: ArmLur.am-ը տեղեկացավ, որ վաճառքի է հանվել սահմանամերձ Բերդավանի գինու գործարանը: Նշենք, որ Բերդավանի գինու գործարանը հիմնադրվել է 1946 թվականին: Այն ժամանակին մթերել է 10 հազար տոննա խաղող: Ի դեպ, այս օրերին գործարանի արտադրած գինիները վաճառվում են ռուսաստանյան որոշ քաղաքներում: ArmLur.am-ը կապ հաստատեց գործարանի տնօրեն Արշակ Ավագյանի հետ եւ հետաքրքրվեց, թե ինչն է գործարանը վաճառելու պատճառը: Մեր հարցին ի պատասխան՝ տեղական արտադրողն ասաց. «Ֆինանսական խնդիր է, ուզում ենք վաճառել: Հարմար չէ, չենք կարողանում աշխատել»:

Իսկ, ահա, Բերդավանի վարչական ներկայացուցիչ Արամ Ջուրաբյանը ArmLur.am-ին փոխանցեց, որ ինքն այս օրերին զանգահարում է այն մարդկանց, որոնք ծնվել են տարածաշրջանում եւ ֆինանսապես ապահովված են, ու առաջարկում է գնել գինու գործարանը. «Ափսոս է, թող Տավուշում ծնվածը գնի»:

ԿՈՉ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

Եվրոպայի ու Եվրասիայի հարցերով ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Քերեն Դոնֆրիդը կոչ է արել հայկական ու ադրբեջանական կողմերին «անհապաղ» բանակցություններ սկսել Լաչինի միջանցքի արգելափակումը վերացնելու շուրջ: Դրա մասին տեղեկացնում է ԱՄՆ պետքարտուղարության Եվրոպայի ու Եվրասիայի հարցերով բյուրոն թվիթերյան գրառման միջոցով, ուր, մասնավորապես, ասված է. «Պետքարտուղարի տեղակալ Դոնֆրիդը հորդորել է ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանին ու Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովին անհապաղ ներգրավվել բանակցություններում դիվանագիտական լուծում գտնելու նպատակով՝ Լաչինի միջանցքով տեղաշարժը հնարավոր դարձնելու համար: Նա կոչ է արել երկու արտգործնախարարներին կրկին ներգրավվել կայուն խաղաղությանը հասնելու գործընթացում»,- հայտնում է ԱՄՆ պետքարտուղարությունը:

ՀԱՎԱՔ

ՀՅԴ 3 ԱՆԴԱՄՆԵՐԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ

ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնում քննվող իրական վարույթի շրջանակներում դարձվում են ՀՀ-ում գործող կուսակցություններից մեկի հավաքին մասնակցելու նպատակով անձանց առերեսույթ նյութապես շահագրգռելու դեպքի հանգամանքները:

ՀՀ ոստիկանության ՔՈ գլխավոր վարչությունում համացանցի մշտադիտարկման արդյունքում հայտնաբերված՝ լրատվամիջոցի կողմից սոցիալական ցանցում հրապարակված «ՀՅԴ-ականները շարունակում են փողով մարդ բերել» վերտառությամբ ձայնագրության առթիվ 2022 թվականի օգոստոսի 25-ին ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննության ընթացքում կատարվել են մեծածավալ քննչական եւ վարութային գործողություններ, Ոստիկանությանը տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություն քննությանը հետաքրքրող մի շարք էական հանգամանքներ պարզելու նպատակով:

ՀՀ ՔԿ Մասիսի քննչական բաժնի եւ Ոստիկանության ծառայողների համագործակցված եւ համակարգված ծավալուն գործողությունների արդյունքում նախաքննությամբ ձեռք են բերվել փաստական տվյալներ այն մասին, որ հեռախոսային խոսակցությունը տեղի է ունեցել Արարատի մարզում 2022 թվականի հունիսի 20-ից մինչեւ հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում նույն մարզի Փոքր Վեդի համայնքի 67-ամյա բնակիչ Գ.Մ.-ի եւ Բարձրաշեն համայնքի 56-ամյա բնակիչ, Արտաշատ խոշորացված համայնքի ավագանու անդամ Ա.Մ.-ի միջեւ:

Պարզվել է, որ խոսակցությունը վերաբերել է ՀՅ-ում գրանցված կուսակցություններից մեկի կողմից կազմակերպված հանրահավաքներին մասնակցելու գործընթացը կազմակերպելուն եւ նշված միջոցառմանը մասնակցելու նպատակով մի քանի անձանց միջոցով այլ քաղաքացիների նյութապես շահագրգռելուն: Քննությամբ պարզվել են նաեւ ձայնագրության մեջ նշվող այն անձանց ինքնությունը եւ տվյալները, որոնց միջոցով կարող էր կազմակերպված լինել վերոնշյալ գործընթացը: Դատարանի համապատասխան որոշման հիման վրա՝ այդ գործընթացին հնարավոր առնչություն ունեցող մի քանի անձանց՝ Արարատի մարզի տարբեր համայնքներում գտնվող բնակարաններում 2023թ. հունվարի 11-ին կատարվել են խուզարկություններ, ինչպես նաեւ քննչական եւ վարութային այլ գործողություններ:

Խուզարկության արդյունքում առգրավվել են «Հայաստան դաշինք» գրառմամբ թղթապանակներով տասնյակ թղթեր, որոնք գրառումներ են պարունակում բազմաթիվ անձանց անձնական եւ անձնագրային տվյալների, ստորագրությունների, ընտրատեղամասերի, գումար ստանալու, ինչպես նաեւ դրանից հրաժարվելու վերաբերյալ:

Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով 2023 թվականի հունվարի 11-ին ձերբակալվել է երեք անձ:

Նախաքննությունը շարունակվում է, ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ՝ առերեսույթ հանցագործության բոլոր հանգամանքները պարզելու, դրան առնչություն ունեցող այլ անձանց հայտնաբերելու, նրանց գործողություններին իրավական գնահատական տալու նպատակով:

ԼՈՒՐԵՐ

ԴԻՄՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

Երեկ ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանի վիճակը «Երեւան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում կամ բոլորին հայտնի «ԿԳԲ-ի պադվալում» վատացել է:

Մեզ հասած լուրերի համաձայն՝ նրա պաշտպան Անդրանիկ Մանուկյանը դիմել է «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ, որպեսզի նրան տեղափոխեն հիվանդանոց:

Հիշեցնենք, որ Գալստյանը կալանավորվել է ՀՅ ԶՈՒ-երի կարիքների համար ռազմամթերքի մատակարարման գործընթացում չարաշահումներ եւ առանձնապես խոշոր չափերով հափշտակություններ կատարելու դեպքերի առթիվ քննվող քրեական գործով:

Նա մեղադրվում է նյութական ծանր հետեւանքներ առաջացնող պաշտոնեական դիրքի չարաշահման եւ պաշտոնեական կեղծիք կատարելու համար:

Հիշեցնենք նաեւ, որ այս գործով կալանքի տակ են ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանը, գլխավոր շտաբի պետի տեղակալ Ստեփան Գալստյանը, ռազմական ավիացիայի նախկին պետ Ավետիք Մուրադյանը, իսկ, ահա, զենքի մատակարար Դավիթ Գալստյանը (Պատրոն Դավիթը) ազատության մեջ է: Հավելենք, որ Ստեփան Գալստյանն իրեն առաջադրված մեղադրանքը չի ընդունում:

ԿՄՆԱ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ գեներալ-լեյտենանտ Միքայել Արզումանյանը երկու ամիս եւս կշարունակի մնալ կալաքի տակ: Բանն այն է, որ ՀՅ քննչական կոմիտեն դեկտեմբերի վերջին դիմել է դատարան գեներալի կալանքը երկրացնելու միջնորդությամբ, ինչը դատարանը բավարարել է, եւ նա կշարունակի մնալ կալանքի տակ:

Գրել էինք, որ Արզումանյանի դեմ հարուցված քրեական վարույթով առերեսումների շարք է սկսվել: Նախաքննական մարմինը Արցախի պաշտպանական բանակի հրամանատարների եւ այլ անձանց է հրավիրում հարցաքննության, առերեսում ՊԲ նախկին հրամանատարի հետ:

Նկատենք, որ սովորաբար առերեսումներ են իրականացվում այն ժամանակ, երբ քրեական վարույթով հակասություններ են առաջանում գործով անցնող անձանց ցուցմունքներում: Դա է պատճառը, որ քննիչը Միքայել Արզումանյանին եւ գործով անցնող այլ անձանց նստեցրել է դեմ-դիմաց եւ կոնկրետ հարցադրումներ արել:

Նկատենք, որ Արզումանյանը կալանավորվել էր սեպտեմբերի 1-ին եւ մինչ օրս գտնվում է կալանքի տակ:

Ի դեպ, գրել էինք, որ մինչեւ նրան մեղադրանք առաջադրելը վկայի կարգավիճակով հարցաքննվել է նաեւ ԱԺ պատգամավոր, «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը:

Հավելենք, որ Միքայել Արզումանյանին մեղադրանք է առաջադրվել Շուշի քաղաքի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում պաշտոնեական անփութություն կատարելու համար:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Ա. Վարդանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022 թվականի ապրիլի 5-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում, գտնվելով Երեւան քաղաքի Չեխով փողոցի 52/46 հասցեում գործող «Աուստելեկոմ» ՍՊ ընկերությանը պատկանող «Չինար» սուպերմարկետում, նշված սուպերմարկետի խմիչքների համար նախատեսված տաղավարից գաղտնի հափշտակել է 0.7մլ. տարողությամբ 1 շիշ 52.200 ՀՅ դրամ արժողությամբ «Դվին» տեսակի կոնյակ եւ 0.7մլ. տարողությամբ 1 շիշ 20 տարեկան հնեցմամբ, 30.600 ՀՅ դրամ արժողությամբ «Նաիրի» տեսակի կոնյակ՝ «Չինար» սուպերմարկետի խմիչքների պատասխանատու Նինա Հայրապետյանին պատճառելով ընդհանուր 82.800 ՀՅ դրամի գույքային վնաս:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՊԱՅԹՅՈՒՆԻ ԴԵՊՔ

2023 թվականի հունվարի 11-ին ՀՅ ոստիկանության Վարդենիսի բաժնից հաղորդում է ստացվել այն մասին, որ նույն օրը՝ժամը 20:20-ի սահմաններում, անհայտ անձը ոստիկանության հիշյալ բաժնի հատուկ պահպանվող տարածքի մուտքի դարպասի մոտ պայթուցիկ սարք է նետել, որի պայթյունից կոտրվել են ոստիկանության բաժնի վարչական շենքի ապակիները, վնասվել հատուկ պահպանվող տարածքի սանհանգույցի տանիքը, պատը, ինչպես նաեւ վնասվել է դարպասը:

Դեպքի առթիվ ՀՅ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում, ՀՅ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ: Նախաքննության ընթացքում փորձագետի մասնակցությամբ զննվել է դեպքի վայրը, եւ արձանագրվել են վնասվածքները: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել են դեպքի մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ ենթադրյալ հանցագործություն կատարած անձի ինքնությունը, որը նույն քաղաքի 58-ամյա բնակիչ է: Վերջինս, անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա, ձերբակալվել է եւ ներկայացվել քննչական բաժին:

Նախաքննության ընթացքում առգրավվել են հիշյալ տղամարդու հագին եղած հագուստները, ստացվել են արգասիքի նմուշներ, որպես վկա դեպքի հանգամանքների շուրջ հարցաքննվել է վերջինիս կինը: Համապատասխան հանձնարարություն է տրվել ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչությանը: Նշանակվել է դատաապրանքագիտական, շինարարատեխնիկական, հետքաբանական եւ պայթյունատեխնիկական համալիր փորձաքննություն, ստացված նմուշներով եւ առգրավված հագուստներով նշանակվել է քրեագիտական փորձաքննություն:

Ձեռնարկվում են անհրաժեշտ գործողություններ՝ տեղի ունեցածի պատճառները եւ վարույթի համար էական նշանակություն ունեցող այլ հանգամանքներն ամբողջությամբ պարզելու, լրիվ, օբյեկտիվ եւ բազմակողմանի քննություն ապահովելու նպատակով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 11-ից 12-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 47 դեպք, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԵՌ ՀԵՌՈՒ ԵՆ 2015Թ.-Ի ՑՈՒՑԱՆԻՇԻՑ

Ի պատասխան լրագրողական հարցմանս՝ Տավուշի մարզպետարանից գրավոր հայտնել են, որ 2022թ. դեկտեմբերի 29-ի դրությամբ Իջեւան խոշորացված համայնքի բնակավայրերում կատարվել է 633,2 հեկտար ցորենի, 37,3 հեկտար՝գարու, Նոյեմբերյան խոշորացված համայնքում՝ 981,2 հեկտար ցորենի, 354 հեկտար՝գարու, Բերդ խոշորացված համայնքում՝1453,98 հեկտար ցորենի, 104,6 հեկտար՝ գարու ցանք: Ընդհանուր առմամբ, 2022թ. դեկտեմբերի 29-ի դրությամբ Տավուշի մարզում կատարվել է 3068,7 հեկտար ցորենի, 486,9 հեկտար գարու ցանք, մարզում՝ ընդհանուր 3555,6 հեկտար աշնանացան: Աշնանացանը խթանելու համար գործում է պետական աջակցության ծրագիր. էլիտար սերմերով աշնանացան ցորենի ցանքի դեպքում տնտեսավորող գյուղացուն տրվելու է հեկտարի հաշվով 120 հազար դրամ, իսկ սովորական սերմերով ցանքի դեպքում՝ 70 հազար դրամ ֆինանսական աջակցություն: Դա հետո է տրվելու, երբ Տավուշի մարզպետարանի աշխատողները տեղերում ճշտեն, ստուգեն ցանված հացահատիկի հեկտարների չափերը, իսկ գյուղացին նախ դրամական աջակցության կարիք ունի, որպեսզի թանկ վառելանյութ եւ հացահատիկի սերմեր գնի ու կարողանա ցանքս կատարել: Նախկին տարիներին աշնանացան կատարելու համար պետությունը հացահատիկի սերմացուի, դիզելային վառելանյութի եւ ազոտական պարարտանյութի գները սուբսիդավորում էր: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը մարզում արված աշնանցանի 3555,6 հեկտարը նվաճում է համարում, մինդեռ ամեն ինչ համեմատության մեջ է երեւում: 2016 թվականին Տավուշի մարզում աշնանացան ցորենի ցանքերը կազմել են 3012, 2015 թվականին՝5684 հեկտար:

ԳԱԶԱՏԱՐԸ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՆ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը հայտնում է, որ հունվարի 10-ին՝ժամը 12-ին, Դիլիջանի համայնքապետարանի նիստերի դահլիճում նշանակված էր «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ««Ղազախ-Երեւան գիծ Dպ-1000մ» մայրուղային գազատարի կապիտալ նորոգում» նախագծի՝ շրջակա միջավայրի ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկման 2-րդ փուլը: Համայնքապետարանի ինտերնետային կայքում տեղադրված հայտարարությունը ազդակիր համայնքին եւ շահագրգիռ հանրությանը հրավիրում էր մասնակցելու հանրային քննարկմանը: Հայտնի չէ, թե ինչու է սույն մայրուղային գազատարի կապիտալ նորոգման վերաբերյալ հանրային քննարկումն անցկացվել հենց Դիլիջան համայնքում: Այդ մայր գազատարի կապիտալ նորոգումը կարող է նշանակել, որ Հայաստանը պատրաստվում է բնական գազ ներկրել Ադրբեջանից՝ Ղազախի շրջանի տարածքով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐՑԱԽԻ ԱԳՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է

ԱՀ արտաքին գործերի նախարարությունը հայտարարություն է տարածել Արցախի՝ Ադրբեջանի կողմից շարունակվող շրջափակման կապակցությամբ.

«Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության եւ նրա 120.000 բնակչության մեկ ամիս շարունակվող շրջափակումը 2020թ. 44-օրյա պատերազմից հետո ամենալայնածավալ հարձակումն է Արցախի ժողովրդի վրա:

2022թ. դեկտեմբերի 12-ին ադրբեջանական իշխանությունները, կոպտորեն խախտելով 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթները, արգելափակել են Արցախը Հայաստանի եւ արտաքին աշխարհի հետ կապող Լաչինի միջանցքը: Արդյունքում հանրապետությունում օրեցօր սրվում է առաջին անհրաժեշտության ապրանքների, դեղորայքի, պարենի եւ վառելիքի պակասը: Շրջափակման կործանարար ազդեցությունը խորացնելու նպատակով Ադրբեջանը փակել էր իր կողմից օկուպացված տարածքներով Հայաստանից Արցախ հասնող գազի մատակարարումը:

Հետագայում գազամատակարարումը վերականգնվել է, սակայն 2023թ. հունվարի 9-ին դադարեցվել է Հայաստանից էլեկտրաէներգիայի մատակարարումը Գորիս-Ստեփանակերտ միակ բարձրավոլտ գծի վթարի պատճառով, որը եւս անցնում է Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքով: Մինչ այսօր Ադրբեջանը միտումնավոր խոչընդոտում է վթարավերականգնողական աշխատանքները, ինչը վկայում է նրա քայլերի կանխամտածվածության մասին: Այսպիսով, Ադրբեջանի գործողությունները 120.000 բնակչություն ունեցող Արցախը կանգնեցրել են հումանիտար աղետի շեմին: Արցախի շրջափակումը 2020թ. Թուրքիայի եւ Մերձավոր Արեւելքից ահաբեկչական կազմակերպությունների անմիջական մասնակցությամբ Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության եւ նրա ժողովրդի դեմ սանձազերծված ռազմական ագրեսիայի ուղղակի շարունակությունն է:

Չկարողանալով Արցախի ժողովրդին իր հայրենիքից վտարել ռազմական ճանապարհով՝ Ադրբեջանը զինադադարի հաստատումից ի վեր՝ ավելի քան երկու տարի, հետեւողական փորձեր է ձեռնարկում քիչ ակնհայտ, բայց ոչ պակաս անմարդկային մեթոդներով իր հանցավոր նպատակներին հասնելու համար: Ադրբեջանի ձեռնարկած քայլերի ամբողջությունը եւ նրա բարձրագույն ղեկավարության՝ Բաքվի իրական մտադրությունները բացահայտող պաշտոնական հայտարարությունները վկայում են, որ Արցախի Հանրապետության շրջափակումը Ադրբեջանի քաղաքականության հերթական գործիքն է՝ ուղղված Արցախի ժողովրդի ոչնչացմանը: Միտումնավոր ստեղծելով անտանելի կենսապայմաններ՝ Ադրբեջանը նպատակ է հետապնդում խարխլել Արցախի ժողովրդի ընդհանրությունն ու ամբողջությունը՝ պարտադրելով օտարացում իր պատմական հայրենիքից եւ հրաժարում սեփական հավաքական իրավունքների իրացումից:

Ադրբեջանի գործողությունները, անկասկած, նրա ցեղասպան քաղաքականության շարունակությունն են: Կոչ ենք անում պետություններին, որոնք գործում են եւ՛ անհատապես, եւ՛ միջազգային կազմակերպությունների շրջանակներում, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության եւ ցեղասպանության հանցագործության կանխարգելման նկատմամբ ունեցած համընդհանուր հանձնառության, ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ անհապաղ կանխարգելելու ցեղասպան գործողությունները, որոնք Ադրբեջանը համակարգված կերպով իրականացնում է Արցախի ժողովրդի դեմ բացարձակ անպատժելիության մթնոլորտում: Միջազգային հանրությունն ունի անհրաժեշտ գործիքակազմը եւ իրավական բոլոր հիմքերը՝ միջամտելու Արցախում ստեղծված եւ օրեցօր վատթարացող իրավիճակին:

Վերահաս աղետի համատեքստում միջազգային հանրության անգործությունն անընդունելի է, այդ թվում նաեւ այն պատճառով, որ դա Ադրբեջանի իշխանությունների կողմից դիտարկվում է որպես իրենց հանցավոր գործողությունների լուռ խրախուսում»:

ՌՈՒՍԱԿԱՆ Взгляд

«ՌԻՍԿԻ ՏԱԿ Է ԴՐԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

Ռուսական Взгляд պարբերականն անդարդարձել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ օրեր առաջ ունեցած մամուլի ասուլիսին: «Փաշինյանը որոշել է ռիսկի տակ դնել հայկական պետականությունը» վերնագրությամբ հրապարակման մեջ հոդվածագիրն առանձնացրել է լրատվամիջոցների համար հրավիրված ասուլիսի՝ Ռուսաստանին ու տարածաշրջանին վերաբերող հատվածները:

Այսպես, հոդվածի առաջին պարբերությունում հեղինակն ասում է, որ Փաշինյանն ասուլիսի ընթացքում մի քանի սենսացիաներ արեց. նախ հայտարարեց, թե հրաժարվում է ՀԱՊԿ զորավարժությունները Հայաստանում անցկացնելուց, ապա հասկացրեց, որ Ղարաբաղում ռուս խաղաղապահներին կարող են ՄԱԿ-ի զորքերը փոխարինել:

Հոդվածագիրը հաջորդիվ հարց է տալիս ու սկսում մանրամասնել, թե ինչու է հնարավոր, որ Փաշինյանի՝ Երեւանի ու Բաքվի կոնֆլիկտը Թուրքիայի կամ Արեւմուտքի միջոցով լուծելու քաղաքականությունը հայոց պետականության կորստի հանգեցնի:

Ըստ հոդվածագրի՝ Փաշինյանի խոսքերը երկու միտումների տրամաբանական հետեւանք են: «Դրանցից առաջինն Ադրբեջանի եւ Թուրքիայի՝ղարաբաղյան կարգավորման հիմքերը խարխելու համակարգային քաղաքականությունն է, ինչը թե՛ մարտավարական, թե՛ ռազմավարական չափումներ ունի: Մարտավարական առումով Ադրբեջանը, օգտագործելով Ռուսաստանի կենտրոնացումը ռազմական հատուկ գոտում (Ուկրաինայում-Ս.Վ.), փորձում է վերանայել ղարաբաղյան վերջին պատերազմի՝ իր համար առանց այն էլ հաղթական արդյունքները, մասնավորապես՝ շրջափակելով խեղդել Լեռնային Ղարաբաղի՝ Մոսկվայի կողմից փրկված հատվածը ու այնտեղի հայերին հարկադրել լքել իրենց տները: Ըստ երեւույթին, Ադրբեջանը կարծում է, որ Մոսկվան չի միջամտի նման քաղաքականությանը»,- գրում է ռուսական պարբերականը:

Թարգմանեց՝ ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 7 ճՏՊ. 17 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Կոտայքի մարզ, համայնք Գառնի, Շիրազի փողոց, 14 հասցեում գտնվող 270,9 ք.մ. բնակելի տուն, 14,2 ք.մ. թոնրատուն, 10,5 ք.մ. կաթսայատուն եւ 0,108 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 25900000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Առինջ, Հ. Գասպարյան փողոց, 9 հասցեում գտնվող 219,7 ք.մ. բնակելի տուն եւ 0,04379 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 45900000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան ք., Միքայելյան փողոց, 2/2 հասցեում գտնվող 96,95 ք.մ. բնակարան /գույքի կազմում առկա է 30,52 ք.մ. մակերեսով հասարակական նշանակության առեւտրի սրահ/: Լոտի մեկնարկային գինը՝ 19100000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 30.01.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 02.03.2023թ.-ին:

2. Շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- Շիրակի մարզ, համայնք Անի, Մարալիկ ք., Հ. Շահինյան փողոց, 34/1 հասցեում գտնվող 192,01 ք.մ. առեւտրի եւ սպասարկման սրահ, 1,63 ք.մ. ընդհանուր մակերեսով ինքնակամ շինություններ եւ 0,0132 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 31300000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 30.01.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 02.03.2023թ.-ին:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքեր:

ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում կամավոր ատեստավորմամբ հավելավճար ստանալու հնարավորություն կտրվի արվեստի եւ մարզադպրոցների ուսուցիչներին եւ մարզիչներին: Կառավարության նիստում ««Կրթության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու եւ անհետաձգելի համարելու մասին նախագիծը ներկայացրեց կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նախարարի խոսքով՝ կառավարությունը արտադպրոցական ոլորտում նախատեսում է ներդնել մասնագիտական զարգացման եւ վարձատրության բարձրացման փոխկապակցված մեխանիզմ:

«Արտադպրոցական հաստատությունների ցանցը դեռեւս խորհրդային ժամանակահատվածում եւ այս պահին հանրապետությունում ունենք. երաժշտական, արվեստի, գեղարվեստի, մանկապատանեկան ստեղծագործության 240 դպրոց եւ կենտրոն կա, որոնցից 50-ը տեղակայված են Երեւանում, 190-ը՝ մարզերում, եւ այդ դպրոցներում եւ կենտրոններում սովորում է շուրջ 50 հազար երեխա:

Բացի այդ, ունենք 174 սպորտային կազմակերպություններ, որտեղ մարզվել է ավելի քան 42 հազար երեխա: Այս հաստատություններում ուսուցումը իրականացվում է նախարարության կողմից հաստատված օրինակելի ուսումնական պլաններով, որով սահմանվում են համապատասխան բովանդակային չափորոշիչները»,- ասաց նախարարը:

Նախարարը տեղեկացրեց, որ երաժշտական, արվեստի, գեղարվեստի եւ մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում դասավանդում է 5099 ուսուցիչ, սպորտային կազմակերպություններում աշխատանք է իրականացնում 2100-ից մի փոքր ավել մարզիչ մանկավարժ:

«Ոլորտում կարիք ունենք օրենսդրական զգալի փոփոխությունների, որոնք կկարգավորեն քաղաքականությունը, մասնագիտական զարգացման ծրագրերը, ֆինանսավորումը եւ այլն:

Այս փուլում հարմար ենք գտել անդրադառնալ մի քանի հրատապ հարցերի: Մասնավորապես՝ «Կրթության մասին» օրենքի առաջարկվող փոփոխություններով նախատեսում ենք, որ մանկավարժներն ու մարզիչները կկարողանան անցնել կամավոր ատեստավորում եւ հաջող արդյունք ցուցաբերելու դեպքում ստանալ հավելավճար:

Այստեղ խնդիրը մի փոքր բարդ է, որովհետեւ արտադպրոցական կազմակերպությունների գերակշիռ մասը համայնքային են, եւ այստեղ վարձատրությունը խիստ տարբերվում է, ուստի նախատեսում ենք, որ պետական քաղաքականության միջոցով պետք է կարողանալ ավելի համահարթ մոտեցման տանել, եւ, հետեւաբար, պլանավորում ենք, որ հավելավճարները կլինեն ֆիքսված գումարների միջոցով»,- եզրափակեց Անդրեասյանը:

ԱՃՈՒՐԴ. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՎԱՃԱՌՔ

Գ

Գայանե Քաջիկի Ռեզյանին պատկանող՝ ստորեվ նշված անշարժ գույքը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ Պարտապան) սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 07.02.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի 11.03.2020թ. ՍՆԴ/0403/04/19 վճռով սնանկ ճանաչված Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ ստորեւ նշված շարժական գույքի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտով.

Լոտ 1 - Պարտապան Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ կողմից Աշխեն Արշակյանի հանդեպ ունեցած պարտավորությունների կատարման համար գրավադրված եւ Գայանե Քաջիկի Ռեզյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, ք.Երեւան, Կենտրոն Նորագյուղ թաղամաս 126/2 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքը ((համաձայն գնահատման հաշվետվության շինության հնդհանուր տեխնիկական վիճակը գնահատվել է անբավարար), Սեփականության իրավունքի վկայական՝ 01072015-01-0151, տրված՝ 01.07.2015 թվականին, կադաստրային ծածկագիրը 01-006-0711-0073, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, հողամասի չափը՝ 0,010454 հա, իրավունքի տեսակը՝ սեփականություն):

Մեկնարկային գինը՝ 3,884,112 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված գույքի վրա առկա է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում է գրավի առարկա:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ սնանկության գործով թիվ 2480103328850000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՇՐՋԱՓԱԿՈՒՄ

«ՀՈԳԵՊԵՍ ԴԱՏԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԶԳԱՑԻ». ԳԱՅԱՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Արցախում եւ Հայաստանում զարգացող իրադարձությունների շուրջ ArmLur.am-ի հետ զրույցում իր մտահոգությունների է հայտնել Քառօրյա պատերազմի հերոս Ադամ Սահակյանի մայրիկը՝ Գայանե Սահակյանը:

«Հոգեպես դատարկություն, վիրավորանք զգացի, երբ իմացա, որ ադրբեջանցիներն այս անգամ էլ ստորաբար փակել են Արցախ-Հայաստան կապող միակ ճանապարհը: Արդեն մեկ ամիս է, ինչ փակ է ճանապարհը, հետեւանքներն անկանխատեսելի կարող են լինել՝ չնայած այն հանգամանքին, որ ինձ նման բազմաթիվ ծնողներ ցանկանում են, որպեսզի շուտափույթ լուծում ստանա այս խնդիրը, քանի որ մեր հոգում կիսով չափ դատարկություն է տիրում. այնտեղ են նահատակվել մեր որդիները: Ադամը մինչ ծառայությունը երբեւէ Արցախում չէր եղել, բայց անսահման նվիրում եւ սեր կար իր մեջ: Արցախը մեր երկրորդ հայրենիքն է, տունն է, Ջրականը, Ադամը, որտեղ ծառայել եւ զոհվել է իմ որդին, մեր որդիները, եւ հիմա այդ տարածքները գտնվում են թշնամու ձեռքում, ինչը մեզ համար շատ ցավոտ է: Այն գիտակցումը, որ քո որդու արյունով պահված դիրքերն այլեւս մերը չեն, սարսափելի է»,- նշեց նա:

Մեր զրուցակցի խոսքով՝ Արցախը Հայաստանի անվտանգային գոտին է: Սա իրական կյանք է, որտեղ սեւագիր չեն գրում:

«Մենք պետք է մեր բոլոր որոշումներում լինենք շատ լուրջ ու խոհեմ: Եթե իմ ձայնը կարող է հասնել միջազգային որեւէ ատյանի, ապա խնդրում եմ քայլեր ձեռնարկել գոնե այն մանուկների համար, որոնք գտնվում են իրենց տնից հեռու»,- ընդգծեց տիկին Գայանեն:

Հիշեցնենք, որ ապրիլյան պատերազմի հերոս Ադամ Սահակյանը 2016թ.-ի ապրիլի 2-ին մարտական դիրքի վրա թշնամու հանկարծակի հարձակման ժամանակ ծավալված թեժ ու համառ մարտերում ծառայակիցների հետ պաշտպանել է Արցախի Ջաբրայիլի մարտական դիրքը:

Ադամ Սահակյանը սահմանապահ գումարտակից էր, ապրիլի 1-ի առավոտյան բարձրացել էր դիրքեր. նույն օրվա գիշերը՝ ժամը 3:00-ի սահմաններում էլ տեղի է ունեցել հակառակորդի հարձակումը:

Սերժանտը իր ծառայակից ընկերների հետ 5 ժամ շարունակ մարտնչել է թշնամու դեմ՝ հասցնելով նրան զգալի կորուստներ (200-ից ավելի սպանված հատուկջոկատային): Ադամն ընկել է հերոսի մահով առավոտյան ժամը 8:00-ի սահմաններում մարմնին եւ դեմքին ստացած ծանր հրազենային վիրավորումներից:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԱՎԱՐՏԻ ՄԱՍԻՆ

Երգչուհի, հաղորդավարուհի Մարի Ավանեսյանն արդեն տեւական ժամանակ է, ինչ չի զբաղվում իր կարիերայով: Այս մասին Մարին խոսել է նաեւ «Ինստագրամ»-ի «Սթորի» բաժնում առկա հարց ու պատասխանի ժամանակ: Այն հարցին, թե արդյոք Մարին շարունակելու է երգչուհու կարիերան, թե ոչ, նա հստակ պատասխանել է. «Երգչուհու կարիերան՝ ոչ, բայց երբեւն կերգեմ»: Նշենք, որ Մարին արդեն երկար տարիներ է, ինչ աշխատում է Հանրային հեռուստաընկերությունում: Երգչուհին ամուսնացել է 2021 թվականին: Զույգը պսակադրվել էր Օձունի վանական համալիրում: Մարի Ավանեսյանի ամենահայտնի երգերից է «Սեւ դառը սուրճ»-ը, որով մինչ այսօր հիշում են նրան որպես երգչուհի:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»-Ը՝ ՆՈՐ ՀԱՍՑԵՈՒՄ

«Յունիբանկ»-ի «Աշտարակ» մասնաճյուղը վերաբացվել է նոր հասցեում Աշտարակ, Տիգրան Մեծի 17-17/1: Հաճախորդները կսպասարկվեն երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 9.30-16.30-ը:

Մասնաճյուղի վերաբացումը երկար սպասված իրադարձություն էր Աշտարակի բնակիչների համար: Մասնաճյուղը տրամադրում է ծառայությունների լայն շրջանակ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց. այստեղ կարող եք ավանդ բացել, օգտվել սպառողական կամ բիզնես վարկից, կատարել դրամական փոխանցում, ստանալ քարտ, ներդրումներ անել «Յունիբանկ»-ի բաժնետոմսերում եւ պարտատոմսերում:

Մասնաճյուղի համար տեղը եւ հերթերի կառավարման էլեկտրոնային համակարգն օգնում են խնայել հաճախորդի ժամանակը: Նոր տարածքում տեղադրվել է նաեւ ինքնասպասարկման վճարային տերմինալ, որի միջոցով հաճախորդները կարող են համալրել հաշիվը, մարել վարկը, կատարել կոմունալ եւ այլ վճարումներ:

«Յունիբանկ»-ի համար կարեւոր ուղղություն է մասնաճյուղային ցանցի զարգացումը եւ հաճախորդների սպասարկման կազմակերպումը տարբեր ուղղություններով: Բարելավվելով առցանց ծառայությունները եւ մոբայլ հավելվածը՝ միաժամանակ բանկն ընդլայնում է մասնաճյուղային ցանցը, քանի որ շատ հաճախորդներ դեռ նախապատվությունը տալիս են բանկ այցելելուն եւ մասնագետների հետ անձնական շփմանը:

ԼՈՒՐԵՐ

ՕՐԻՆԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ

ՀՀ վաստակավոր արտիստուհի, երգչուհի Նունե Եսայանն ու դերասան Ավո Խալաթյանը 16 տարի համատեղ ապրելուց հետո վերջապես որոշել են օրինական գրանցել իրենց ամուսնությունը: Զույգը երջանիկ օրվա հետ կապված լուսանկար է հրապարակել:

Նշենք, որ Նունե Եսայանն ու Ավո Խալաթյանն ունեն երկու զավակ՝ Հենրին եւ Էլիզաբեթը:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Tata Steel ՄՐՑԱՇԱՐ

Հայաստանի շախմատի հավաքականի նախկին անդամ Լեւոն Արոնյանը, որն այս պահին հանդես է գալիս ԱՄՆ-ի դրոշի ներքո, կմասնակցի Tata Steel մրցաշարին:

Tata Steel Masters 2023-ին այս անգամ մասնակցում են 14 շախմատիստներ, որոնց թվում են աշխարհի գործող չեմպիոն Մագնուս Կարլսենը, Դին Լիժենը, Ֆաբիանու Կարուանան, Անիշ Գիրին, Ուեսլի Սոն եւ այլք:

Տարվա առաջին խոշորագույն մրցաշարը կմեկնարկի հունվարի 13-ին եւ կեզրափակվի հունվարի 29-ին: Այն բաղկացած է 13 տուրից:

Tata Steel-ը շախմատային ամենահեղինակավոր մրցաշարերից մեկն է, որում ժամանակին հաղթել է նաեւ աշխարհի 9-րդ չեմպիոն Տիգրան Պետրոսյանը:

ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ԸՆՏՐԱՆԻ

Ֆուտբոլի պատմության ու վիճակագրության միջազգային ֆեդերացիան ներկայացրել է 2022 թվականի աշխարհի հավաքականը: Նախորդ տարվա ընտրանին ունի հետեւյալ տեսքը՝

- դարպասապահ՝ Տիբո Կուրտուա (Բելգիա, «Ռեալ»),
- պաշտպաններ՝ Աշրաֆ Հաքիմի (Մարոկկո, ՊՍԺ), Յոշկո Գվարդիոլ (Խորվաթիա, «Լայպցիգ»), Վիրջիլ Վան Դեյկ (Նիդերլանդներ, «Լիվերպուլ») եւ Ալֆոնսո Դեյվիս (Կանադա, «Բավարիա»),
- կիսապաշտպաններ՝ Լուկա Մոդրիչ (Խորվաթիա, «Ռեալ»), Կեւին Դե Բրույնե (Բելգիա, «Մանչեսթեր Սիթի»), Լեո Մեսսի (Արգենտինա, ՊՍԺ),
- հարձակվողներ՝ Էրլինգ Հալանդ (Նորվեգիա, «Մանչեսթեր Սիթի»), Քարիմ Բենզեմա (Ֆրանսիա, «Ռեալ») եւ Կիլիան Մբապե (Ֆրանսիա, ՊՍԺ):

Ավելի վաղ IFFHS-ի վարկածով անցած տարվա լավագույն մարզիչը Լիոնել Սկալոնին էր ճանաչվել, իսկ ֆուտբոլիստը՝ Լիոնել Մեսսին:

● Հունվարի 17-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա «Երգեհոնային երաժշտության համերգ»: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:

ԵՂԵ՜Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈՁԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ընդհանուր տիպի տուն-ինտերնատ ընդունվելու համար սոցիալական աջակցության տարածքային մարմին ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնի քաղաքացին:

Սերինե Հայրապետյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 25-ի N1112-Ն որոշման՝ փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային մարմին պետք է ներկայացնել՝

-անձնագիր կամ նույնականացման քարտ,

-նույնականացման քարտ չունենալու դեպքում՝ բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տեղեկանքի տեսքով հատկացված հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք, իսկ դրանց բացակայության դեպքում՝ սոցիալական քարտ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանք,

-խնամքի տրամադրում հայցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ հանդիսանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթ (կացության քարտ), իսկ փախստականի կարգավիճակ ունենալու դեպքում՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ,

-հաշմանդամության վերաբերյալ տեղեկանք՝ տրված բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող մարմնի կողմից, եթե անձը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է որպես հաշմանդամություն ունեցող անձ,

-անձի բժշկական քարտը՝ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի ու Առողջապահության նախարարի համատեղ հրամանով հաստատված ձեւին համապատասխան կամ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112 -Ն որոշման N 3 հավելվածի հիվանդությունների ցանկում ներկայացված հիվանդություններով հիվանդ չլինելու հանգամանքը հիմնավորող փաստաթուղթ (փաստաթղթեր)՝ տրված համապատասխան բժշկական հաստատության (հաստատությունների) կողմից:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաճախորդին խնամք տրամադրվում է՝ սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի որոշման հիման վրա:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Երրորդ երկրներից ՀՀ տարածք ներմուծվող ծխախոտի արտադրանքի համար ներմուծման դեպքում ո՞րն է համարվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն:

Տրդատ Հունանյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ ծխախոտի արտադրանքի ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը՝ առանց ԱԱՀ-ի:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝երրորդ երկրներից ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց՝ օրենքով սահմանված կարգով որոշվող մաքսային արժեքի եւ գանձվող մաքսատուրքի ու ակցիզային հարկի գումարը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Մեկնարկել են 2 կարեւոր ավտոճանապարհային նախագծերի իրականացման աշխատանքները, որոնցով Նոր Նորք եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների մեր քաղաքացիների համար կկառուցվեն Երեւանի կենտրոնին կապող այլընտրանքային ճանապարհներ. այս մասին հայտնել են Երեւանի քաղաքապետարանից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.01.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: